ր., Իկնատիոս Մարտիրոսով 1 ր., Խաչատուր Շահնարով 3 ր., Գէորգ Խայսերցիով 2 ր., Սարգիս Հալաճեան 5 ր.։ Գումարն է 501 րուբլի։ Գ. Գաբրիէլ Խալայճեան վճարեց փոստի ծախս 3 րուբլի։

Ստեփան Տէր-Կարապետեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Մարտի 14-ին

Համակրելով վան քաղաքի մեր ազգայնոց, որոնց կեանքը մի բազմաչարչար նահատակութիւն է հանդիսացնում, Աստրախան քաղաքի հայ երիտասարդներն ըստ չափու կարողութեան հանգանակեցին իրանց նուէրներն յօգուտ այդ թշուառաց։ Մեր հանգանակած 1100 ր. յոյս ունենք, ըստացած է «Մշակի» խմբագրութիւնը։

Ահա այս նամակի հետ ուղարկում ենք ձեզ և նուիրատուների ցուցակը։

Ստեփաննոս Գալստեան Ջանումեանց 100 ր., Եղբարք Գուստինցեանք 100 ր., Յարութիւն Սարգսեան Իւանեանց 50 ր., Օհան Ֆրանգուլեանց 50 ր., Ոմն անյայտ 50 ր., Մկրտում Դանիէլեան Սարգսեան 50 ր., Մկրտիչ Հախվերդեան 50 ր., Մարգարիտ Կարապետեան Սողոմոնեան 25 ր., Եսայ Մաթեանց 25 ր., Ալէքսանդր Փարսադանեան 25 ր., Եղբարք Սուրաբէկեանք 25 ր., Գրիգոր Արէլեանց 25 ր., Սիմէօն Կաղաչկեանց 25 ր., Յովհաննէս Սարգսեանց 25 ր., Յովսէփ և Աւետիս Աստուրեանք 20 ր., Արէլ Չիրիկեան 15 ր., Աբրահամ Փասոյեանց 15 ր., Ղազարոս Եղեան և եղբարք 15 ր., Աստուածատուր Իկնազեանց 15 ր., Դանիէլ Յարութիւնեան Ֆրանգուլեանց 15 ր., Եղբարք Յ. և Մ. Թիլէթեանք 15 ր., Եղբարք Ճիժեանք 15 ր., Մարգարիտ Մաղաթեան 10 ր., Անյայտ ոմն 10 ր., Գրիգոր Ֆրանգուլեան 10 ր., Սարգիս Թեւեթեան 10 ր., Մաղիկ Կիրէյեան 10 ր., Եղիսաբէթ Ախվերդեան 10 ր., Ստեփաննոս Մարտիրոսեան Պօպով 10 ր., Սիմէօն Մարտիրոսեան Պօպով 10 ր., Թագուհի Մեհրապեան 10 ր., Եղիսաբեթ Ուլուխանեանց 10 ր., Ստեփաննոս Սունդուկեանց 10 ր., Անյայտ ոմն 10 ր., Կատարինէ Յովհաննէսեան Մաջանդարանցեան 8 ր., Եղբարք Ջուրաբէգեանք 6 ր., Ս. Գ. Սերբրակեան 5 ր., Ա. Բէրիժանեանց 5 ր., Եղիսաբէթ Ֆրանգուլեան 5 ր., Աստուածատուր Գալստեան Աստուրեան 5 ր., Անյայտ ոմն 5 ր., Եղիսաբէթ Տէր-Զաքարեան Պօպով 5 ր., Х. Хлѣбниковъ 5 р., Յակոբ Արգարեանց 5 ր., Կատարինէ Թեւեթեան 5 ր., Աղէքսանդր Մուրղուզեան 5 ր., Եղիսաբէթ Գալստեան Մարտիրոսեան 5 ր., Խաչատուր Աւետիսեան Լալայեանց 5 ր., Անյայտ ոմն 5 ր., Անյայտ ոմն 5 ր., Անյայտ ոմն 5 ր., Վ. Արէշեանց 3 ր., Յովհաննէս Կիտայեան 3 ր., Н. Орловъ 3 р., Н. Федоровъ 3 р., Л. Кузнецовъ 3 р., Неизвѣстный 3 р., Никифоръ Ильинъ 3 р., Անյայտ ոմն 3 ր., Խաչատուր Արգարեան 3 ր., Յ. Յ. Արգարեան 3 ր., Դաւիթ Բախրեանց 3 ր., Սիմէօն Սոբոլեան 3ր., Գալուստ Սահրատեանց 3 ր., Յակոբ Սիմէօնեան Սամուրղուլին 3 ր., Յովհաննէս Ստեփանեան 3ր., Կարապետ Ֆրանգուլեանց 3 ր., Պետրոս Պօպով 3 ր., Գրիգոր Յովակիմեան Բայեանց 3 ր., Մարիամ Անդէասեան 3 ր., Մկրտիչ Բօղդանեան 3 ր., Պետրոս Առաքելեան Պօպով 3 ր., Հռիփսիմէ Սարգսեանց 3 ր., Яковъ Ивановъ Комовъ 3 р., Սահակ Ամրակումեան Բուրչալեանց 3 ր., Կարապետ Ֆարմանեանց 3 ր., Ղազար Սահրատեան 2 ր., Անյայտ ոմն 2 ր., Կարապետ Ջիմշիտեանց 2 ր., Թադէոս Չերքեզեանց 2 ր., Խաչատուր Դաղաչեանց 2 ր., Ոսկի Մուրղուզեանց 2 ր., Կիրակոս Մաջանդարանցեանց 2 ր., Յովհաննէս Կազմինցեան 1 ր., Յովակիմ Աբրահամեան Բալաչեանց 1 ր., Դաւիթ Գաբրիէլեանց 1 ր., Խաչատուր Բախրեանց 1 ր., Մարգարիտ Կալէյեանց 1 ր., Սարգիս Պօրտնով 1 ր., Սարգիս Թաւրիզեանց 1 ր., Երկու անձինք 1 ր., Անյայտ Ոմն 1 ր., Անյայտ Ոմն ր., Աստուածատուր Ստեփանեանց 1 ր., Զաքարիա Ջուրաբեան 1 ր., Մակար 1 ր., Գէորգ Լոխինեանց 1 ր., Անյայտ Ոմն 1 ր., Ստեփանոս Նազարեանց 1 ր., Յովհաննէս Սոբոլեանց 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Հռիփսիմէ Մոլոտով 1 ր., Յովսէփ Կիրէյեանց 1 ր., Մկրտիչ Լեխանեանց 1 ր., Անյայտք 1 ր. 50 կ., Անյայտ Ոմն 50 կ., Միքայէլ Սարգսեան 10 ր., Յովհաննէս Ս. Սողոմոնեանց 3 ր., Н. Ив. Шавердовъ 4 ր. Այվազեանց 1 ր., Մելքոմ Բարանուեանց 5 ր., Մարիամ Շախնազարեան 1 ր., Ղազար Կալուստեան Սիլընիկեան 2 ր., Յովհաննէս Սար. Ստեփանեանց 1 ր., Միքայէլ Պօպովեան 1 ր., Անյայտ Ոմն 1 ր., գումարն է 1100 ր.։

Մարտիրոս Կասոնեցեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, ապրիլի 7-ին

Յայտնի է Թիֆլիսի հայ հասարակութեանը, որ մշտական խմբի դերասան պ. Ադամեանը, որը վարձված էր թատրոնական կօմիտէտի կողմից ամբողջ ձմերային ժամանակամիջոցի համար, դեռ ժամանակը չը լրացած, թողեց բեմը և այդ եղաւ գլխաւորապէս սառնութեան պատճառը, որը տիրեց մեր հասարակութեանը դէպի հայկական թատրոնը, ուր նա սիրով ընդունում էր միշտ իր սիրած դերասանին։ Այս կարծիքիս հաստատելու փաստ կարող է լինել այս ամսի 3-ին Նրան ցոյց տուած համակրութիւնը։ Թէ ինչ էր պատճառը, որ պ. Ադամեանը հրաժարվեցաւ իր պայմանագիրը կատարելուց, այդ արդէն լաւ յայտնի է հասարակութեանը։

Մի կողմը թողնելով այդ պատճառը և այն հարցը, թէ արդեօք պ. Ադամեանի և կօմիտէտի անդամի մէջ պատահած տարակուսանքը, որ ծագել էր թատրոնի բեմի վրա և թատրոնական գործի պատճառով, պէտք է լինէր կօմիտէտի և ժողովի քննութեան առարկայ և թէ ունէր արդեօք իրաւունք պ. Ադամեանը այդ տարակուսանքի պատճառով հեռանալ թատրոնից, թողնելով, ասումեմ, այս բոլոր հարցերը, որոնց մասին հասարակութիւնը զանազան կարծիքի է, ես կամենում եմ դարձնել թատրոնական ժողովի և կօմիտէտի դիրեկտօրների ուշադրութիւնը այս բոլոր հարցերի սկզբնապատճառի վրա, որ կախված է գլխաւորապէս այն յարաբերութիւններից, որոնք այդպիսի գործի մէջ, որպիսին է թատրոնը, որտեղ աշխատում են շատ և զանազան դրութեան և դերերի տէր մարդիկ, պէտք է լինեն որոշված, որքան կարելի է ամենաճիշդ կերպով։ Այսպիսի գործի մէջ, եթէ ուզում ենք, որ նա առաջ գնայ, Նրա ամեն մի աշխատակցի դերը, լինի նա դերասան կամ թէ կօմիտէտի անդամ, պէտք է որոշապէս և բացարձակ ցոյց տուած լինի մի կանոնադրութեան մէջ, որ լինէր հաստատած ժողովի հաւանութեամբ և որին պարտաւոր լինէին ենթարկվել թէ դերասանները և թէ թատրոնի միւս աշխատակիցները, ամեն իր պաշտօնի մէջ. Ահա այսպիսի կանոնադրութեան բացակայութեան մէջ ենք տեսնում բոլոր այն շփոթների պատճառը, որ այդպիսի ցաւալի ընթացք տուեց այս գեղեցիկ և գեղեցիկ կերպով սկսված գործին, որին մեր քաղաքի հասարակութեան միւս մասերը սիրով նախանձում էին և որի անկմանը, ցաւելով պէտք է խոստովանենք, այժմ գուցէ, ծափահարում են արդարապէս մեղադրելով մեզ, հայերիս, մեր և կարծես թէ միայն մեզ պատկանած ախտի մէջ —անմիաբանութեան.....

Այս կանոնադրութեան չունենալն էր պատճառը, որ թատրոնին գործակցող ամեն մարդ իրան իրաւունք էր տալիս խառնվել ուրիշի գործի մէջ, նոյնպէս և այդ էր պատճառը, որ, ինչպէս լսել ենք, և դերասանները շատ անգամ կամակոր են եղել, իրանց կապրիզներն են ուզեցել առաջ տանել։ Թատրոնը արհեստի տաճար է, Նրան պէտք է յարգել և նա չը պէտք է լինի որ և է անձնական կամ մասնաւոր գործերի տեղ։ Այս բոլոր բանի վրա հսկողը պէտք է լինի հաստատ կանոնադրութիւն, որի մէջ պարզ և որոշ կերպով ցոյց տուած լինեն թատրոնի բոլոր աշխատակիցների յարաբերութիւնները, պարտաւորութիւնները և իրաւունքները։ Այս ամենը առաւել ևս ցանկալի է մանաւանդ այժմ, երբ թատրոնը, ինչպէս տեսնում ենք, դառել է մեզ համար մի անհրաժեշտ հարկաւորութիւն։ Մենք միւս կողմից կարծում ենք մինչև անգամ առաւել ևս նպատակայարմար կը լինէր, այդ կանոնադրութիւնը կազմելուց և ժողովի հաւանութենից յետոյ ներկայացնել բարձր իշխանութեանը հաստատելու համար։

Մենք լսել ենք, որ վերջին ժողովում կանոնադրութեան մասին արդէն զարթեցրել են հարց, թէև խուլ կերպով, բայց մինչև այժմ սորա մասին ոչինչ կարգադրութիւն դեռ չէ արած։ Այս պատճառով մենք կարծում ենք, որ լաւ կանէր կօմիտետը եթէ շուտով հրաւիրէր ընդհանուր ժողով լրագիրների մէջ տպելով յայտարարութիւն և ներկայացնէր այս հարցը Նորա վճռին։ Այդ ժողովում մի և նոյն ժամանակ կարելի է վերջ տալ այն տարակուսանքին, որ եղաւ պատճառ պ. Ադամեանի հեռանալուն։ Մենք յոյս ունենք, որ և պ. Ադամեանը, ինչպէս խելացի մարդ և հաւատարիմ իր վսեմ գործին և երախտագէտ դէպի հասարակութիւնը, տեսնելով, որ թատրոնական գործը մեզանում ստանալու է կանոնաւոր ընթացք և դրած կը լինի հաստատ հիման վրա, ուրախութեամբ կը համաձայնվի շարունակել իր օգտաւէտ գործունէութիւնը մեր բեմի վրա, որով նա առաւել ևս գրաւած կը լինի հասարակութեան սէրը և համակրութիւնը։

Ս. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հաստատ աղբիւրից լսում ենք որ Գաբրիէլ Սունդուկեանցը հրաժարվել է հայ թատրոնական մասնաժողովի անդամակցութիւնից։

—

Գ. Ա. Միրզօեվ, որ ունի ԹԻՖԼԻՍՈՒՄ նկարչութիւնների թանգարան, Գօլօվինսկիյ պրօսպէկտի վրա, Շիօևի տանը, այժմ բաց է անում այդ թանգարանը յօգուտ հայ սովատանջների, նշանակելով մուտքը 20 կօպէկ։ Ժողովարանի մէջ գտնվում են ամենանշանաւոր հեղինակների նկարչութիւնները։ Թանգարանի մէջ ընդունվում են մասնաւոր պատկերներ։ Թանգարանը կարճ ժամանակ բաց կը լինի։

—

Դ.ՁԱՐԻՑ մեզ գրում են։ «Այստեղ հազիւ անցկացաւ երկար ձմեռը, և յանկարծ դարձաւ ապրիլի 2-ին եղանակը ցրտեց և սկսեց ձիւն գալ»

—

ԹԻՖԼԻՍԻ վանքի մայր-եկեղեցու աւագ քահանայ Յովհաննէս Տէր-Պօղոսեան Սարգսեանց յանձնեց «Մշակ» լրագրի խմբագրութեանը յօգուտ Վանի սովատանջների 50 րուբլի ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու իշխանուհի Քալի Բէգթաբէկեանց և իր որդու Գէորգի։

—

Ապրիլի 8-ին պ. Ադամեան մի կօնցէրտ տուեց Արծրունու թատրոնում։ Մասնակցում էին տիկին և պ. Գէկէր-Շէնկ, տիկին և պ. Տէր-Գրիգորեան, պ. պ. Եղեկեան և Մէսխի։ Թատրոնը թէև լի չէր, բայց Ներկայ էր Թիֆլիսի ընտրված հայ հասարակութիւնը։ Ադամեանը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ հասարակութեան կողմից։ Նրա կարդացած ոտանաւորներից ամենազօրեղ տպաւորութիւն գործեց Գամառ-Քաթիպայի Նոր բանաստեղծութիւնը «Մեծ» վերնագրով։ Երկրորդ բաժնում «Ընտանեկան օջախ» վօդէվիլը, որ շատ աղէտ փոխադրութիւն է ռուսերէնից, բաւական աջող կերպով խաղացվեցաւ։ Մէսխին ծիծաղեցրեց հասարակութիւնը իր վրացերէն պատմութիւններով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ հետևեալ տեղեկութիւններ ենք կարդում անգլիական պարլամենտի անդամների ընտրութիւնների մասին։

Չորեքշաբթի, ապրիլի 7-ին անգլիական ազատամիտ կուսակցութիւնը պահպանողականներից 74 տեղեր աւելի պէտք է ունենար, եթէ մինչև անգամ ենթադրենք, որ նոքա գիւղական շրջաններում միայն մի մի տեղ աշխատեցին։ Նոր պարլամենտի անդամների թիւը չորեքշաբթի օրը հետևեալ կերպով էր բաժանված. 290 ազատամիտներ, 163 պահպանողականներ և 35 իրլանդացի աւտօնօմիստներ։ Այսպիսով եթէ պահպանողականները միանային իրլանդացի աւտօնօմիստների հետ, նոքա պարլամենտի մէջ կունենան ընդամենը 198 ձայներ, իսկ ազատամիտները 92 ձայների մեծամասնութիւն։ Եթէ ընդունենք, որ հետևեալ ընտրութիւնների ժամանակ այդ մեծամասնութիւնը քչանայ 35 կամ 40 ձայներով, այնու ամենայնիւ ազատամիտները Նոր պարլամենտի մէջ ձայների աւելի մեծ բազմութիւն կունենան, քան թէ առաջվայ պարլամենտի մէջ պահպանողականներն ունէին։

Անգլիայում ոչ ոք չէր հաւատում ընդդիմադրական կուսակցութեան այսպիսի կատարեալ յաղթութեանը։ Ազատամիտները 20 ձայների բազմութենից աւելի յոյսեր չունէին։ Ազատամիտ կուսակցութեան անդամներից շատերը այդքանի էլ չէին սպասում։

Մանաւանդ նշանաւոր է այն իրողութիւնը, որ միայն քաղաքների բնակիչները չանցան ազատամիտների կողմը. գիւղական ընտրողները նոյնպէս սկսեցին ձայն տալ յօգուտ ազատամիտների։ Երկրագործները շատ սպասեցին որ պահպանողական կուսակցութեանը պատկանող կալուածատէրերը բարելաւէին նրանց դրութիւնը։ Նոքա այժմ հաւատացած են, որ հէնց որ կառավարութիւնը ազատամիտների ձեռքը ընկնի, նոքա կը սկսեն բարելաւել երկրագործների վիճակը։

Առհասարակ Գլադստոնը կարող է բաւական լինել։ Նա Բիկօնսֆիլդից փառաւոր վրէժ առաւ 1874 թուականի յաղթութեան համար։ Ազատամիտները այնպիսի հանգամանքների ժամանակ յաղթեցին, որոնք այդ յաղթութեանը առանձին նշանակութիւն են տալիս։

Վեց տարի սրանից առաջ Անգլիան կատարեալ հանգստութիւն և բարօրութիւն էր վայելում։ Անգլիական հպատակները եկամուտից ոչինչ տուրք չէին վճարում կառավարութեանը։ Ազատամիտ կուսակցութեան սկսած ձեռնարկութիւնները բոլորը վերջացրած էին։ Ընտրողները պէտք է չը ցաւէին, որ իշխանութիւնը անցնում էր պահպանողականների ձեռքը, որոնք ազատամիտների խելացի կառավարութեան պտուղները պէտք է քաղէին։ Այդպիսի պայմանների ժամանակ համարձակ կարելի էր ուրախացնել ազգային ինքնասիրութիւնը Բիկօնսֆիլդի «կայսերական» քաղաքականութեամբ և նրա ձգտումներով վերադարձնել Անգլիային «գերակշռող դերը Եւրոպայի խորհուրդների մէջ։»

Այժմ գործերի դրութիւնը բոլորովին ուրիշ է։ Ազատամիտները սկսեցին պատերազմել պահպանողականների հետ այնպիսի ժամանակ, երբ պահպանողական մինիստրութիւնը իր ձեռնարկութիւններից ոչ մէկը բարեյաջող վախճանի չէր հասցրած և երբ այդ ձեռնարկութիւնների բոլոր համակրողները պէտք է հաւատացած լինէին, որ ազատամիտները նրանց չէին շարունակիլ։ Չը նայելով այս հանգամանքին անգլիացիների մեծամասնութիւնը ձայն տուեց յօգուտ Բիկօնսֆիլդի հակառակորդների։

Այսուհետև ազատամիտ կուսակցութիւնը կարող է հաւատացած լինել, որ նա պէտք է չը հոգայ իր «գոյութեան» համար։ Այդ մինիստրութիւնը կարող է համարձակ իրագործել այն արտաքին քաղաքականութիւնը, որի նախագիծը կար մարկիզ Հարտինգտոնի ընտրողական շրջաբերականի մէջ։ Անգլիայի քաղաքական կեանքը մտնում է բոլորովին նոր շրջանի մէջ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՇԱՆԽԱՅ, 8 ապրիլի։ Իշխանների և բարձր աստիճանաւորների մասնաժողովը վճռեց, որ Չօնխօու բանտի մէջ գցվի մինչև աշունքը և յետոյ գլխատվի։ Ընդհանուր կարծիքը ընդդէմ է Կուլջայի դաշնագրին։ Ամեն տեղ պատերազմական տրամադրութիւն է տիրում։ Տեղացիների մէջ լուր է տարածված, իբր թէ Չօնխօու ինքնասպանութիւն է գործել։

ԹԷՀՐԱՆ, 8 ապրիլի։ 2000 հետևակ և 700 հեծելազօրք ուղարկված է Խօրասան պարսկական սահմանական զօրքերին ուժեղացնելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Րիազանեան նահանգապետ Աբազա նշանակված է տպագրական գործերի վերաբերեալ գլխաւոր վարչութեան մեծաւոր։

ԼՕՆԴՕՆ, 9 ապրիլի։ Նոր կաբինէտի կազմը յանձնված կը լինի Հարտինգտօնին։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ